

# Եվրոպական Միության հետ Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հարաբերությունների ներկա փուլը (2013-2017 թթ.)

Հակոբյան Մ. Հ.

Երևանի պետական համալսարան, Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոն (Հայաստան, Երևան)

mher.hakobyan@ysu.am

**Վճռորոշ բառեր՝** Եվրոպական Միություն, Արևելյան գործընկերություն, Ստացածն համաձայնագիր, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր, տարբերակում

## Нынешний этап отношений Армении, Грузии и Молдовы с Европейским союзом (2013-2017 гг.)

Акопян М.К.

Ереванский государственный университет, Кафедра политических институтов и процессов (Армения, Ереван)

mher.hakobyan@ysu.am

**Резюме:** В данной статье изучается динамика развития отношений между Европейским союзом и Арменией, Грузией и Молдовой в 2013-2017 гг., а также обсуждаются проявления применения принципа дифференциации в трёх странах в результате пересмотра Европейской политики соседства в 2015 г. В статье также представляется применение компонента межличностных контактов в Армении, Грузии и Молдове в рамках Восточного партнёрства и выделяются основные направления развития двусторонних отношений с ЕС.

**Ключевые слова:** Европейский союз, Восточное партнёрство, Соглашение об ассоциации, Соглашение о всеобъемлющем и расширенном партнёрстве, дифференциация.

## The current stage of relations of Armenia, Georgia and Moldova with the European Union (2013-2017)

Hakobyan M.H.

Yerevan State University, Chair of Political Institutions and Processes (Armenia, Yerevan)

mher.hakobyan@ysu.am

**Abstract:** The current article studies the dynamics of relations between the European Union and Armenia, Georgia and Moldova in 2013-2017, as well as the manifestations of the application of the principle of differentiation over the three countries as a result of reviewed European Neighbourhood Policy in 2015. The article also discusses the application of people-to-people contacts component of the Eastern Partnership over Armenia, Georgia and Moldova and outlines the directions of the development of bilateral relations with the EU.

**Keywords:** European Union, Eastern Partnership, Comprehensive and Enhanced Partnership Agreement, differentiation.

2009 թ. «Արևելյան գործընկերություն» (ԱԷԳ) ծրագրի մեկնարկով Եվրոպական Միությունը (ԵՄ) սկիզբ դրեց վեց հետխորհրդային երկրների<sup>1</sup> հետ տարբերակված հարաբերություններին՝ վերացնելով այն կարծրատիպը, թե «Եվրոպական հարևանության քաղաքականություն» (ԵՀՔ) ծրագրում ներառված բոլոր երկրները ԵՄ-ի կողմից ընկալվում են միակերպ և հաշվի չեն առնվում դրանց առանձնահատկությունները: Այս փոփոխությունն ար-

տահայտվեց նաև նոր շրջանակային համաձայնագրերի շուրջ բանակցությունների մեկնարկով: 1990-ական թթ. վերջից սկսած ԵՄ-ի ու հետխորհրդային երկրների մեծ մասի (ներառյալ՝ ԱԷԳ երկրների) հետ հարաբերությունները կարգավորվում էին Գործընկերության ու համագործակցության համաձայնագրերով (ԳՀՀ)<sup>2</sup>, որոնք քաղաքական հարաբե-

<sup>1</sup> Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Վրաստան, Ուկրաինա:

<sup>2</sup> Այս համաձայնագրերի նպատակը շահառու երկրներում ժողովրդավարության և շուկայական տնտեսության զարգացումն է բազմազան ոլորտներում համագործակցության ու քաղաքական երկխոսության միջոցով

րություններ սկզբնավորեցին ԵՄ-ի հետ, սակայն միայն «մակերեսային» համագործակցության հնարավորություն էին տալիս, քանզի չէին նախատեսում խորը տնտեսական կամ քաղաքական կապեր ԵՄ-ի հետ: Հաջորդ «միջանկյալ» փաստաթուղթը Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) Գործողությունների ծրագրերն (ԳՕ) էին, որոնք թեև նախատեսում էին գործընկեր երկրներին աջակցություն ցուցաբերել իրավաքաղաքական, տնտեսական ու այլ բարեփոխումների գործում, սակայն դրանք շրջանակային համաձայնագրեր չէին, իսկ առանց նորմատիվության չէին կարող խթանել համակարգային փոփոխություններ:

2010 թ. ԵՄ-ն Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի և Ուկրաինայի հետ բանակցություններ սկսեց Ասոցացման համաձայնագրերի (ԱՀ) շուրջ<sup>3</sup>: Դրանք նախատեսում էին ավելի ընդգրկուն ու թիրախային համագործակցության քաղաքական, տնտեսական, իրավական և այլ ոլորտներում: ԱՀ-ները, ներառելով Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրերը (ԽՀԱԱՀ), հիմքեր էին ստեղծում ԵՄ-ի հետ առավել համակողմանի ու երկարաժամկետ կապվածության համար: Դրանք նաև համարժեք արձագանք էին ԱլԳ երկրների մեծամասնության կողմից ԵՄ-ի հետ հարաբերությունների ընդլայնման պատրաստակամությանը<sup>4</sup> և ներու-

նակ էին առանձին երկրների հետ կառուցել երկկողմանի հարաբերություններ՝ խուսափելով համահարթեցումից:

Սույն հոդվածում քննարկվում է ԵՄ-ի հետ ԱլԳ երեք երկրների՝ Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի հարաբերությունների ներկա փուլը, որի մեկնարկը կարելի է համարել 2013 թ., երբ ամփոփվեցին ԱՀ-ների շուրջ բանակցությունները և փոքրիշատե հստակեցվեց ԵՄ-ի հետ շփման հետագա օրակարգը: Հոդվածը կենտրոնանում է նշված երեք երկրների վրա՝ հաշվի առնելով դրանց ֆիզիկական ու ժողովրդագրական նմանությունները, առկա էթնօքաղաքական հակամարտությունները՝ զուգորդված անվտանգության հիմնահարցի հետ, ինչպես նաև ԵՄ-ի հետ հարաբերությունների խորությունն առնվազն մինչև ԱՀ-ների ստորագրումը: Ուկրաինան, լինելով էներգետիկ ռեսուրսների տարանցման երկիր<sup>5</sup>, ԵՄ-ի համար նկատելիորեն ավելի մեծ նշանակություն ունի: Ադրբեջանի համար էլ ԵՄ-ն էներգիայի արտահանման առաջնային ուղղությունն է<sup>6</sup>, ուստի երկկողմ հարաբերությունները գերազանցապես կառուցված են այս ասպեկտի վրա: Բացի այդ, ԵՄ-Ադրբեջան ԱՀ-ն չէր կարող ներառել ԽՀԱԱՀ-ն, քանզի այն պահանջում է տվյալ պետության անդամակցություն Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), մինչդեռ Ադրբեջանն ունի միայն դիտորդի կարգավիճակ: Հետևաբար, այս երկու երկրները նվազ համեմատելի են Հայաստանի, Վրաստանի և Մոլդովայի հետ՝ պայմանավորված ԵՄ-ի հետ հարաբերությունների բնույթով ու ուղղվածությամբ: Ուսումնասիրվող երեք երկրներին կարելի է նաև

(Partnership and Cooperation Agreements (PCAs): Russia, Eastern Europe, the Southern Caucasus and Central Asia, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM:r17002>, մատչելի էր 05.03.2018):

<sup>3</sup> Բելառուսի հետ համապատասխան բանակցություններ չեն սկսվել վերջինիս մոտ ԵՄ-ի հետ համագործակցության նկատմամբ գրեթե զրոյական հետաքրքրվածության և երկրում մարդու իրավունքների վիճակի պատճառով:

<sup>4</sup> Վրաստանում և Ուկրաինայում ԵՄ-ին անդամակցությունն արտաքին քաղաքական գերակայություն է թե՛ քաղաքական իշխանությունների, թե՛ հասարակության համար: Մոլդովան թեև սահմանադրորեն չեզոք պետություն է, սակայն եվրաինտեգրումն այստեղ ևս արտաքին քաղաքական օրակարգի առաջնային խնդիրներից է՝ չնայած անկայուն քաղաքական համակարգին ու երկրում անվտանգային ու սոցիալ-մշակութային խնդիրներին՝ կապված Մերձդնեստրի ու Գազաուզիայի հակամարտություններին: Հայաստանի արտաքին քաղաքական դիսկուրսում թեև ԵՄ անդամակցությունը չի եղել առաջնային պլանում, սակայն ԵՄ-ի հետ սերտ հարաբերություններն առանձնակի կարևորություն ունեն երկրի համար՝ ամրագրված Ազգային անվտանգության ռազ-

մավարությունում: Ադրբեջանն արտաքին հարաբերություններում թեև միտված չէ տարածաշրջանային որևէ ուժի, սակայն ԵՄ-ի հետ փոխգործակցությունն այստեղ ևս կարևորվում է առնվազն էներգետիկ ոլորտում:

<sup>5</sup> ԵՄ-ին մատակարարվող բնական գազի շուրջ 20 տոկոսն անցնում է Ուկրաինայով (տե՛ս Commission Communication “On security of energy supply and international cooperation – The EU Energy Policy: Engaging with Partners beyond Our Borders,” COM(2011) 539, 07.09.2011, p. 6, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52011DC0539&from=EN>, մատչելի էր 05.03.2018):

<sup>6</sup> Joint Staff Working Paper “Implementation of the European Neighbourhood Policy in 2010 Country report: Azerbaijan,” SEC(2011) 640, 25.05.2011, p. 12, [http://www.europarl.europa.eu/meetdocs/2009\\_2014/documents/dsca/dv/dsca\\_20110608\\_07/dsca\\_20110608\\_07en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20110608_07/dsca_20110608_07en.pdf), մատչելի էր 05.03.2018:

ընդհանրացնել որպես «փոքր պետություններ», որոնք չունեն ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու բավարար ռեսուրսներ, ուստի ստիպված են մասնակցել որևէ ինտեգրացիոն ծրագրի:

2013 թ. հուլիսին ավարտին էին հասցվել ԵՄ-Հայաստան ԱՀ-ի (ներառյալ ԽՀԱԱՀ-ն) շուրջ բանակցությունները, և նախատեսվում էր նույն թվականի նոյեմբերի 28-29-ին Վիլնյուսում կայանալիք ԱլԳ երրորդ գագաթնաժողովին ստորագրել այն, սակայն մի քանի ամիս առաջ՝ սեպտեմբերի 3-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Մոսկվայում հայտարարեց, որ Հայաստանը պատրաստվում է միանալ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջև գործող Մաքսային միությանը (2015 թ-ից Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)), ինչն անհամատեղելի էր ԵՄ-ի կողմից առաջարկվող ԽՀԱԱՀ-ի հետ: ՀՀ արտաքին քաղաքականությունում այս փոփոխությունը, զուգորդվելով ԵՄ-ի կողմից ԱՀ-ի ամբողջականության պահպանման պահանջի<sup>7</sup> և անվտանգության երաշխիքներ ապահովելու անկարողության հետ, անհնար դարձրեց համաձայնագրի ստորագրումը: ԵՄ-ի կողմից դեպի Հայաստան սեփական նորմերի «արտահանման» այս մասնակի ձախողումը կարելի է բացատրել երկու հիմնական գործոնով: Նախ, ԵՄ-ի կողմից արդյունավետ արտաքին կառավարում իրականացնելու համար ոչ միայն անհրաժեշտ է, որ երրորդ երկիրը (այս դեպքում՝ Հայաստանը) նշանակալիորեն կախված լինի ԵՄ-ից, այլև որ ԵՄ-ից լինի ավելի կախյալ, քան կառավարման որևէ այլ աղբյուրից<sup>8</sup>: Այս տեսանկյունից Ռուսաստանի հետ անվտանգային և սոցիալ-տնտեսական կապվածությունն էական կարևորություն ունի: Երկրորդ, ի տարբերություն Վրաստանի և Մոլդովայի՝ ԵՄ անդամակցությունը Հայաս-

տանի արտաքին քաղաքական գերակայություն չէ, ինչը որոշակիորեն նվազեցնում է ԵՄ-ի գրավչությունը: Այնուամենայնիվ, Հայաստանը հայտնել է իր պատրաստակամությունը «ԵՄ-ի հետ ձևավորել այնպիսի գործուն կառուցակարգեր, որոնք մի կողմից արտացոլում են մեր սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերությունների խորքային բնույթը, մյուս կողմից՝ համատեղելի են համագործակցության այլ ձևաչափերի հետ»<sup>9</sup>:

Ի տարբերություն Հայաստանի՝ Վրաստանը և Մոլդովան (ինչպես նաև Ուկրաինան) 2014 թ. ստորագրեցին ԱՀ-ներ, ինչն ԱլԳ վեց երկրների բաժանեցին երկու խմբի՝ ԱՀ-ն ստորագրած երկրներ (Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա) և այն չստորագրած երկրներ (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս): Այնուամենայնիվ, այսպես կոչված, «ռազմավարական դադարից» հետո քայլեր ձեռնարկվեցին երկրորդ խմբի երկրների միջև տարբերակում մտցնելու համար: Հաշվի առնելով ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման պատրաստակամությունն ու նախկին առաջընթացը՝ 2015 թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական հանձնաժողովը Հայաստանի հետ բանակցություններ սկսեց մեկ այլ շրջանակային փաստաթղթի՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շուրջ՝ հաշվի առնելով ԵԱՏՄ-ին միանալուց հետո Հայաստանի ստանձնած պարտավորություններին դրա համապատասխանությունը: ԵՄ ինտեգրացիոն քաղաքականությունում նման փոփոխությունն ամբողջապես համապատասխանում էր վերանայված ԵՀԲ-ի<sup>10</sup> անկունաքարային սկզբունքին՝ գործընկեր երկրների հետ առավել տարբերակված ու ճկուն հարաբերությունների հաստատմանը: Փաստաթղթի շուրջ բանակցությունները տևեցին 15

<sup>7</sup> Արտաքին քաղաքականությունում փոխլրացման սկզբունքի պահպանման նպատակով ՀՀ իշխանությունների կողմից առաջարկվեց ստորագրել ԱՀ-ի միայն քաղաքական բաղադրիչը, սակայն ԵՄ ղեկավարությունն ակնկալում էր Հայաստանի առավել սերտ կապվածություն ԵՄ-ի հետ՝ արտահայտված խորը տնտեսական համագործակցությամբ:

<sup>8</sup> Delcour L., Wolczuk K., *The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation*, Journal of European Integration, 2015, Vol. 37, No. 4, p. 495, <http://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/07036337.2015.104631?needAccess=true>, մատչելի էր 05.03.2018.

<sup>9</sup> «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության երրորդ գագաթնաժողովում», 29.11.2013, ՀՀ նախագահի պաշտոնական վեբ-կայք, <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>, մատչելի էր 05.03.2018:

<sup>10</sup> St' u Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions "Review of the European Neighbourhood Policy," JOIN(2015) 50 final, 18.11.2015, [http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118\\_joint-communication\\_review-of-the-enp\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf), մատչելի էր 05.03.2018:

ամիս և ամփոփվեցին 2017 թ. փետրվարին: ՀՀԳՀ-ն ստորագրվեց 2017 թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում՝ ԱլԳ 5-րդ գագաթնաժողովի ժամանակ, սակայն ուժի մեջ կմտնի բոլոր կողմերի հաստատումից հետո: Այս փաստաթուղթը փոխարինում է ԵՄ-Հայաստան 1999 թ-ից գործող ԳՀՀ-ին՝ Հայաստանը դարձնելով ԵԱՏՄ անդամ առաջին երկիրը, որը շրջանակային համաձայնագիր ստորագրեց ԵՄ-ի հետ: Միևնույն ժամանակ, այն դարձավ առաջին հաջողված օրինակը, երբ ԱլԳ շրջանակներում ԵՄ-ի հետ համագործակցությունն իրապես համապատասխանեցվեց տվյալ երկրի առանձնահատկություններին:

ՀՀԳՀ-ում առանձնացվում են համագործակցության չորս հիմնական ուղղություններ՝ ա) քաղաքական երկխոսություն, բ) արդարադատության ազատություն և անվտանգություն, գ) ոլորտային համագործակցություն և դ) առևտուր<sup>11</sup>: Հակիրճ անդրադարձ կատարելով համաձայնագրի բովանդակությունը՝ հարկ է առանձնացնել մի քանի կետ: ՀՀԳՀ-ն, ի տարբերություն Վրաստանի և Մոլդովայի հետ կնքված ԱՀ-ների, չի ներառում որևէ նշում Հայաստանի «եվրոպական ձգտումների» (ԵՄ-ին հնարավոր անդամակցության) վերաբերյալ, ինչն ԱլԳ երկրների միջև տարբերակման մեկ այլ օրինակ է: ՀՀԳՀ-ի արդյունավետ իրագործման նպատակով նախատեսվում է 2017-2020 թթ. ԵՄ-ի կողմից Հայաստանին տրամադրել մինչև 160 մլն եվրո տնտեսական ու ինստիտուցիոնալ զարգացման, քաղաքացիական հասարակության հզորացման, բնապահպանական և այլ նպատակներով<sup>12</sup>: ՀՀԳՀ-ի միջոցով Հայաստանը շարունակում է օգտվել «Արտոնությունների ընդհանրացված համակարգից» (GSP+), ինչը հնարավորություն է տալիս 6400 անուն ապրանք արտահանել ԵՄ զրոյական կամ նվազեցված մաք-

աստուրքերով<sup>13</sup>: Ընդ որում, թեև ԵԱՏՄ անդամակցությունը պահանջում է արտաքին առևտրի առանցքային տարրերի փոխանցում կառույցին և բարձր արտաքին մաքսատուրքերի սահմանում, Հայաստանը կարողացել է մինչև 2022 թ. տարանցման ազատություն ստանալ 800 անուն ապրանքների համար<sup>14</sup>:

Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ թեև ՀՀԳՀ-ն զիջում է ԱՀ-ին հատկապես ԽՀԱԱՀ-ի բացակայության առումով, սակայն այն Հայաստանի համար կարևոր նշանակություն ունի ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման տեսանկյունից և թույլ է տալիս համատեղել ԵԱՏՄ անդամակցությունը ԵՄ-ի հետ շրջանակային համագործակցության հետ: Այնուամենայնիվ, կարելի է համաձայնել այն պնդմանը, որ ՀՀԳՀ-ն անհրաժեշտ է ընկալել որպես կարճաժամկետ կամ միջնաժամկետ «անցումային գործարք», որն առաջիկա հինգ տարիներին ենթակա է վերանայման<sup>15</sup> կախված դրա իրականացման առաջընթացից:

2014 թ. Վրաստանի և Մոլդովայի հետ ԱՀ-ների ստորագրումը դարձավ ԵՀՔ ԳԾ-ներում նշված «ընդլայնված գործընկերության» փաստացի դրսևորումը<sup>16</sup>: Ինչպես Հայաստանի

<sup>11</sup> ՀՀԳՀ-ի ամբողջական տեքստը տե՛ս *Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part*, JOIN(2017) 37 final, 25.09.2017, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia\\_comprehensive\\_and\\_enhanced\\_partnership\\_agreement\\_cepa.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf), մատչելի էր 05.03.2018:

<sup>12</sup> Տե՛ս Հայաստանում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք, [https://eeas.europa.eu/delegations/armenia\\_en/896/Armenia%20and%20the%20EU](https://eeas.europa.eu/delegations/armenia_en/896/Armenia%20and%20the%20EU), մատչելի էր 05.03.2018:

<sup>13</sup> Regulation (EU) No 978/2012 of the European Parliament and the Council of 25 October 2012 applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC) No 732/2008, Official Journal of the European Union, 2012, [http://trade.ec.europa.eu/doclib/docs/2012/october/tradoc\\_1500\\_25.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2012/october/tradoc_1500_25.pdf), մատչելի էր 05.03.2018.

<sup>14</sup> Տե՛ս *Պայմանագիր Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին*, <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>, մատչելի էր 05.03.2018:

<sup>15</sup> Kostanyan H., Giragosian R., *EU-Armenian Relations: Charting a fresh course*, CEPS Research Report, No. 2017/14, November 2017, p. 3, [https://www.ceps.eu/system/files/HKandRG\\_EU\\_Armenia.pdf](https://www.ceps.eu/system/files/HKandRG_EU_Armenia.pdf), մատչելի էր 05.03.2018.

<sup>16</sup> ԵՄ-Վրաստան ԱՀ-ն տե՛ս *Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part*, Official Journal of the European Union, L 261, Vol. 57, 30.08.2014, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/association\\_agreement.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/association_agreement.pdf), մատչելի էր 05.03.2018: ԵՄ-Մոլդովա ԱՀ-ն տե՛ս *Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Moldova, of the other part*, Official Journal of the European Union, L 260, Vol. 57, 30.08.2014, [http://eeas.europa.eu/archives/docs/moldova/pdf/eu-md\\_aadcfita\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/moldova/pdf/eu-md_aadcfita_en.pdf), մատչելի էր 05.03.2018:

համար ՀԸԳՀ-ն, այնպես էլ Վրաստանի և Մոլդովայի համար ԱՀ-ները փոխարինեցին 1999 թ-ից գործող ԳՀՀ-ներին՝ էապես խորացնելով ԵՄ-ի հետ հարաբերությունները: ԱՀ-ներն ուժի մեջ մտան համաձայնագրի բոլոր կողմերի հաստատումից հետո՝ 2016 թ. հուլիսի 1-ին: Երկու երկրների հետ կնքված ԱՀ-ները գրեթե չեն տարբերվում բովանդակությամբ՝ առաջարկելով ԵՄ-ի հետ համագործակցության միանման շրջանակ: Երկու ԱՀ-ներում էլ հղում է արվում Վրաստանի ու Մոլդովայի «եվրոպական ձգտումները», սակայն որևէ կերպ անդրադարձ չի կատարվում կարճաժամկետ կամ միջնաժամկետ հեռանկարում ԵՄ-ին նրանց անդամակցությանը: 2015 թ. ԵՀՔ վերանայման նախնական փաստաթղթում մակերեսորեն նշվում է, որ գործընկեր երկրների կողմից առկա է համագործակցությունը ԱՀ-ից անդին տեղափոխելու ձգտում<sup>17</sup>, սակայն որևէ կերպ չի ընդգծվում ԵՄ-ի դիրքորոշումը ԱլԳ երկրների անդամակցության հնարավորությունը: Որոշ հեղինակներ նույնիսկ գտնում են, որ ԵՄ-ն ԱՀ ստորագրած երկրների նկատմամբ առաջադրում է նույն պահանջները, ինչ ԵՄ անդամակցության թեկնածու երկրների նկատմամբ, սակայն փոխարենը չի առաջարկում անդամակցության հնարավորություն՝ ԵՀՔ-ն դարձնելով «կիսաբաց դռան» քաղաքականություն<sup>18</sup>:

Ինչպես արդեն քննարկվել է, ԱՀ-ների առանցքային բաղադրիչը, թերևս, ԽՀԱԱՀ-ներն են, որոնք Վրաստանին և Մոլդովային հնարավորություն են տալիս աստիճանաբար ինտեգրվել ԵՄ ներքին շուկայում: ԽՀԱԱՀ-ները կենտրոնանում են համագործակցության երեք ասպեկտների վրա՝ 1) փոխադարձ շուկայական մուտք և ապրանքների առևտրի, ծառայությունների մատուցման ու ներդրումների հոսքի նկատմամբ գրեթե բոլոր մաքսատուրքերի վերացում<sup>19</sup>, 2) կանոնակարգային

համապատասխանեցումների արդյունքում ոչ մաքսային խոչընդոտների վերացում և 3) վեճերի լուծման մեխանիզմների ներդրում (օրինակ՝ մտավոր սեփականության հետ կապված վեճեր)<sup>20</sup>: Թեև մինչև ԽՀԱԱՀ-ների ստորագրումը գործող GSP+ ռեժիմը ևս Վրաստանին ու Մոլդովային ընձեռում էր միակողմանի արտոնյալ մուտք դեպի ԵՄ շուկա, սակայն այն չէր վերացնում ոչ մաքսային խոչընդոտները՝ պայմանավորված իրավական կարգավորումների անհամապատասխանությամբ<sup>21</sup>:

Այնուամենայնիվ, նման ինտեգրումը գործընթաց է, որը կարող է ենթարկվել փոփոխությունների (ընդհուպ մինչև չեղարկում) կախված ԱՀ-ով նախատեսված գործողությունների իրականացումից: Դրանք հիմնականում ներառում են Վրաստանի և Մոլդովայի օրենսդրական մոտարկում ԵՄ չափանիշներին և դրանց իրականացմամբ ու վերահսկմամբ զբաղվող ինստիտուտների ստեղծում: Ընդ որում, այստեղ առկա է ԵՄ կողմից պայմանականության սկզբունքի կիրառման համեմատաբար լայն դաշտ, քանզի ի տարբերություն, օրինակ, Ուկրաինայի և Ադրբեյջանի՝ Վրաստանը և Մոլդովան նվազ տնտեսական կարևորություն ունեն ԵՄ-ի համար: Ուստի վերջիններիս հետ ազատ առևտրի գոտու հաստատումն առավելապես պայմանավորված է ոչ թե ԵՄ-ի համար տնտեսական շահավետությամբ, այլ քաղաքական գործոններով<sup>22</sup>: Վրաստանի և Մոլդովայի հետ կնքված ԱՀ-ներն առևտրային գործընկերությունից բացի ներառում են նաև քաղաքական երկխոսություն, համագործակցություն ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգային քաղաքականության (ԸԱԱՔ), ազատության, անվտանգության և արդարադատության և այլ ոլորտներում:

Չնայած ԵՄ-ի հետ հարաբերություններում ունեցած բազմաթիվ ընդհանրություններին՝ Վրաստանի ու Մոլդովայի թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքական միջավայրերում առկա են որոշ էական տարբերություն-

<sup>17</sup> See a Joint Consultation Paper “Towards a new European Neighbourhood Policy,” JOIN(2015) 6 final, 04.03.2015, <https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/near/files/neighbourhood/consultation/consultation.pdf>, մատչելի էր 05.03.2018:

<sup>18</sup> Bolkvadze K., Lebanidze B., *Building a Security Community in the EU's Neighbourhood? Experiences from Georgia*, in: Rieker P. (ed.), *External Governance as Security Community Building: The Limits and Potential of the European Neighbourhood Policy*, 2016, p. 82.

<sup>19</sup> Մարդկանց ազատ տեղաշարժը կարգավորվում է Վիզաների ազատականացման գործողությունների

ծրագրերով (ՎԱԳԾ). տե՛ս հոդվածի առաջիկա հատվածները:

<sup>20</sup> Bolkvadze K., Lebanidze B., նշվ. աշխ., էջ 83:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> Wolczuk K., *Ukraine and the EU: turning the Association Agreement into a success story*, European Policy Centre policy brief, 23 April 2014, [http://www.epc.eu/documents/uploads/pub\\_4360\\_ukraine\\_and\\_the\\_eu.pdf](http://www.epc.eu/documents/uploads/pub_4360_ukraine_and_the_eu.pdf), մատչելի էր 05.03.2018.

ներ: Դրանցից, ամենանկատելին, թերևս, տարածաշրջանային մյուս ուժի՝ Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերությունների բնույթն է: Վրաստանը 2003 թ. Վարդերի հեղափոխությունից և հատկապես 2008 թ. հնգօրյա պատերազմից հետո ամբողջությամբ միտվել է դեպի ԵՄ. թե՛ վրացական իշխանությունները, թե՛ ընդդիմությունը սատարում են եվրաինտեգրման քաղաքականությունը: Մինչդեռ Մոլդովայում ո՛չ հասարակական, ո՛չ էլ պետական մակարդակներում առկա չէ կայուն արտաքին քաղաքական կողմնորոշում: Նույնիսկ ԱՀ-ի ստորագրումից հետո՝ 2015 թ. Ազգային ժողովրդավարական ինստիտուտի կողմից անցկացված հասարակական հարցումների արդյունքներով՝ Մոլդովայի բնակչության միայն 40%-ն է կողմ եվրաինտեգրմանը, 44%-ը սատարում է եվրասիական ինտեգրումը, իսկ 16%-ն այս հարցում նախընտրություն չունի<sup>23</sup>: Երկրում առկա ներքաղաքական տեղաշարժերը, Մերձդնեստրում ու Գագաուզիայում առկա հակամարտությունները և ՌԴ-ի հետ վերջինների սերտ կապերն էապես թուլացնում են ԵՄ-Մոլդովա հարաբերությունների կայունությունը: Նշված ինդիկատորն անմիջականորեն առնչվում են անվտանգության ու պետականությանը: ԵՄ-ն նվազագույն չափով է ներգրավված Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Գագաուզիայի հակամարտությունների կարգավորման գործընթացներում և չունի դրանց միջամտելու նշանակալի ռեսուրսներ, ինչը, զուգորդվելով սոցիալ-տնտեսական ու էներգետիկ անվտանգության գործոնների հետ, Մոլդովային ստիպում է որոշակի հավասարակշռություն պահպանել Ռուսաստանի հետ հարաբերություններում: Մինչդեռ 2008 թ. ՌԴ-ի հետ հարաբերությունների խզմամբ Վրաստանը բացառեց ցանկացած այլընտրանքային ինտեգրացիոն ուղղություն: Այլ կերպ ասած, Վրաստանի «բացարձակ» եվրաինտեգրումը հանգեցրեց փաստացի տարածքային կորուստների, իսկ Մոլդովայի «անհաստատ» եվրաինտեգրումը թույլ է տալիս պահպանել երկրի հարաբերական տարածքային ամբողջականությունը:

<sup>23</sup> *Moldovans' Public Perceptions of Politics and Government: Results of NDI's November 2015 Public Opinion Research*, <https://www.ndi.org/moldova-November-2015-survey-results>, մատչելի էր 05.03.2018.

Կարծում ենք՝ առանձին քննարկման է արժանի ԵՄ-ի հետ Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի հարաբերություններում ԱլԳ չորս թեմատիկ պլատֆորմներից մեկի՝ միջմարդկային շփումների (people-to-people contacts) իրականացումը: Վերջինս եղել է ԵՄ-ի կողմից պայմանականության ու տարբերակման սկզբունքների կիրառման լծակներից մեկը: ԵՄ-ն դեպի սեփական տարածք ԱլԳ երկրների քաղաքացիների մուտքի դյուրացումը կիրառել է որպես այդ երկրներում քաղաքական ու իրավական փոփոխությունների խթանման գործիք: Ըստ այդմ, հիմք ընդունելով ԵՀՔ ԳԾ-ների իրականացման առաջընթացը<sup>24</sup>, ԵՄ-ն «Շարժունակության շուրջ գործընկերություն» (Mobility Partnerships) համատեղ հոշակագիր Մոլդովայի հետ ստորագրել է 2008 թ., Վրաստանի հետ՝ 2009 թ., իսկ Հայաստանի հետ՝ 2011 թ.<sup>25</sup>: Այս հոշակագրերով նախատեսվում էր ԵՄ-ի հետ փոխգործակցության ու մասնագիտական վերապատրաստումների միջոցով երեք երկրներում ներդնել անօրինական միգրացիայի ու թրաֆիքինգի կառավարման մեխանիզմներ, երկրների քաղաքացիների համար հնարավորություն ստեղծել ուսման, աշխատանքի և այլ նպատակներով օրինական բնակվել ԵՄ տարածքում և այլն: Այս ոլորտում համագործակցության հաջորդ քայլը եղավ Վիզաների դյուրացման և հետընդունման համաձայնագրերի (Visa Facilitation and Readmission Agreements) կնքումը, որոնցով պարզեցվում էր դեպի Շենգեն գոտու երկրներ մուտքի արտոնագրի տրամադրման գործընթացը թիրախային երկրների քաղաքացիների որոշ խմբերի համար, իսկ փոխադարձ տարածքներում անօրինական բնակվող անձինք հնարավորություն էին ստանում վերադառնալ անօրինական բնակության երկրները: Այս համաձայ-

<sup>24</sup> ԵՀՔ ԳԾ-ների իրականացման առաջընթացի տարեկան զեկույցները հասանելի են Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության պաշտոնական վեբկայքում, [https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/8409/enp-progress-reports\\_en](https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/8409/enp-progress-reports_en), մատչելի էր 26.01.2018:

<sup>25</sup> Տե՛ս «*Mobility partnerships, visa facilitation and readmission agreements*,» Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական վեբկայք, [https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements\\_en](https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements_en), մատչելի էր 05.03.2018:

նագրերը Մոլդովայի հետ կնքվեցին 2007 թ.<sup>26</sup>, Վրաստանի հետ՝ 2011 թ.: Հայաստանի հետ երկու համաձայնագրերը համապատասխանաբար ստորագրվեցին 2012 և 2013 թթ., սակայն ուժի մեջ մտան 2014 թ. հունվարին<sup>27</sup>: Այնուամենայնիվ, դժվար է պնդել, որ այս համաձայնագրերի միջոցով ԵՄ-ն կարողացել է էական փոփոխություններ առաջ բերել գործընկեր երկրներում, քանզի դրանք ստորագրվել են ոչ միայն Հայաստանի, Վրաստանի ու Մոլդովայի հետ, այլև Ադրբեջանի, իսկ «Շարժունակության շուրջ գործընկերություն» հռչակագիրը՝ նաև Բելառուսի հետ, որոնք ակնհայտորեն միտված չեն սեփական երկրներում բարեփոխումների իրականացմանը: Այլ կերպ ասած, ԵՄ-ն «պարզևստրեյ» է նույնիսկ իր պահանջներին մասամբ համապատասխանող կամ ընդհանրապես չհամապատասխանող երկրներին: Սա, թերևս, կարելի է բացատրել նրանով, որ ԵՄ-ի կողմից առաջարկվող պայմանները ոչ թե քաղաքական, այլ տեխնիկական բնույթի են: Այսինքն՝ դեպի ԵՄ երկրներ մուտքի դուրսացումը տրամադրվում է ոչ թե ի պատասխան գործընկեր երկրներում քաղաքական բարեփոխումների, այլ միգրացիայի կառավարման արդյունավետ մեխանիզմների առկայության պարագայում<sup>28</sup>: Բացի այդ, այդ համաձայնագրերն առավելապես նպատակ ունեն վերադարձնել ԵՄ տարածքում բնակվող անօրինական ներգաղթյալներին, այլ ոչ թե խթանել գործընկեր երկրների քաղաքացիների օրինական միգրացիան<sup>29</sup>: Հետևաբար, ժողովրդավարության կամ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը նվազ նշանակություն ունեն ԱլԳ միջմարդկային շփումների բաղադրիչ իրագործման հարցում:

ԵՄ քաղաքական պայմանականությունն առավել նկատելի դարձան Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրերը (ՎԱԳԾ), որոնց իրականացման պարագայում ԱլԳ երկրների՝ կենսաչափական անձնագիր ունեցող քաղաքացիները կկարողանային

առանց մուտքի արտոնագրի կարճաժամկետ ուղևորություններ կատարել դեպի Շենգեն գոտի: Ի պատասխան տեղական բարեփոխումների՝ Եվրոպական հանձնաժողովը ՎԳԱԾ ներկայացրեց Մոլդովային 2011 թ. և Վրաստանին 2013 թ., որոնք ուժի մեջ մտան համապատասխանաբար 2014 և 2017 թթ.<sup>30</sup>: 2016 թ. սեպտեմբերին ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնապես ԵՄ-ից հայցեց վիզաների ազատականացման երկխոսության բացում, սակայն ԵՄ-ի կողմից դրական արձագանք չստացվեց<sup>31</sup>:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ վերջին տարիներին ԵՄ-ն որոշակիորեն փոխել է ԱլԳ երկրների հետ հարաբերությունների զարգացման տրամաբանությունը՝ արտահայտված 2015 թ. վերանայված ԵՀՔ-ով և տարբերական սկզբունքի ներդրմամբ: ԱլԳ-ին հաղորդված ճկունությունը թույլ տվեց ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությունից հետո գտնել վերջինիս հետ համագործակցության շրջանակ և 2017 թ. ստորագրել Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր: Վերջինի բարեհաջող իրականացման պարագայում ԵՄ-Հայաստան հարաբերությունների տրամաբանական շարունակությունը պետք է լինի Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի բացումը: Վրաստանի և Մոլդովայի հետ հարաբերությունները, կառուցված լինելով արդեն գործող Ասոցացման համաձայնագրերի և Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրերի վրա, լուրջ հիմք են ապահովում երկկողմ համագործակցության զարգացման ու խորացման համար: Երկարաժամկետ բարեփոխումների իրականացման պարագայում երկու երկրները կարող են հավակնել նաև ԵՄ անդամակցության, որը չպետք է բացառվի օրակարգից:

## Գրականություն

1. Հայաստանում ԵՄ պատվիրակության պաշտոնական կայք [Hayastanum EM patvirakutyam

<sup>26</sup> Վիզաների դուրսացման համաձայնագրի լրամշակված տարբերակն ուժի մեջ է մտել 2013 թ.:

<sup>27</sup> Տե՛ս “Mobility partnerships, visa facilitation and readmission agreements.”

<sup>28</sup> Poli S., *The European Neighbourhood Policy: Differentiation without Political Conditionality?*, Yearbook of Polish European Studies, 2015, Vol. 18, p. 147.

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Տե՛ս “Visa liberalisation with Moldova, Ukraine and Georgia,” Եվրոպական հանձնաժողովի պաշտոնական վեբ-կայք, [https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia\\_en](https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia_en), մասնաշաղկի էր 05.03.2018:

<sup>31</sup> Տե՛ս Kostanyan H., Giragosian R., նշվ. աշխ., էջ 11:

- pashtonakan kayq – in Armenian], [https://eeas.europa.eu/delegations/armenia\\_en/896/Armenia%20and%20the%20EU](https://eeas.europa.eu/delegations/armenia_en/896/Armenia%20and%20the%20EU).
2. «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Արևելյան գործընկերության երրորդ զագաթնաժողովում», 29.11.2013, ՀՀ նախագահի պաշտոնական վեբ-կայք [“Nakhagah Serzh Sargsyani yeluyte Arevelyan gortsenkerutyanyan yerrord gagatnashoghovum - in Armenian], <http://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/11/29/President-Serzh-Sargsyan-at-the-third-Eastern-Partnership-summit-speech/>.
  3. Պայմանագիր Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին [Paymanagir Hayastani Hanrapetutyanyan “Yevrasiakan intesakan miutyanyan masin” 2014 tvakani mayisi 29-i paymanagrinyan mianalu masin - in Armenian], <http://www.arlis.am/documentview.aspx?docid=95214>.
  4. Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and Georgia, of the other part, Official Journal of the European Union, L 261, Vol. 57, 30.08.2014, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/association\\_agreement.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/association_agreement.pdf).
  5. Association Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Moldova, of the other part, Official Journal of the European Union, L 260, Vol. 57, 30.08.2014, [http://eeas.europa.eu/archives/docs/moldova/pdf/eu-md\\_aa-dcfta\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/moldova/pdf/eu-md_aa-dcfta_en.pdf).
  6. Bolkvadze K., Lebanidze B., *Building a Security Community in the EU's Neighbourhood? Experiences from Georgia*, in: Rieker P. (ed.), *External Governance as Security Community Building: The Limits and Potential of the European Neighbourhood Policy*, 2016.
  7. Commission Communication “On security of energy supply and international cooperation – The EU Energy Policy: Engaging with Partners beyond Our Borders,” COM(2011) 539, 07.09.2011, <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52011DC0539&from=EN>.
  8. *Comprehensive and Enhanced Partnership Agreement between the European Union and the European Atomic Energy Community and their Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part*, JOIN(2017) 37 final, 25.09.2017, [https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia\\_comprehensive\\_and\\_enhanced\\_partnership\\_agreement\\_cepa.pdf](https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_comprehensive_and_enhanced_partnership_agreement_cepa.pdf).
  9. Delcour L., Wolczuk K., *The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation*, Journal of European Integration, 2015, Vol. 37, No. 4, <http://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/07036337.2015.1004631?needAccess=true>.
  10. Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions “Review of the European Neighbourhood Policy,” JOIN(2015) 50 final, 18.11.2015, [http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118\\_joint-communication\\_review-of-the-enp\\_en.pdf](http://eeas.europa.eu/archives/docs/enp/documents/2015/151118_joint-communication_review-of-the-enp_en.pdf).
  11. Joint Consultation Paper “Towards a new European Neighbourhood Policy,” JOIN(2015) 6 final, 04.03.2015, [https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/neighborhood/files/neighborhood\\_consultation\\_consultation.pdf](https://ec.europa.eu/neighbourhood-enlargement/sites/neighborhood/files/neighborhood_consultation_consultation.pdf).
  12. Joint Staff Working Paper “Implementation of the European Neighbourhood Policy in 2010 Country report: Azerbaijan,” SEC(2011) 640, 25.05.2011, [http://www.europarl.europa.eu/meetdocs/2009\\_2014/documents/dsca/dv/dsca\\_20110608\\_07/dsca\\_20110608\\_07en.pdf](http://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20110608_07/dsca_20110608_07en.pdf).
  13. Kostanyan H., Giragosian R., *EU-Armenian Relations: Charting a fresh course*, CEPS Research Report, No. 2017/14, November 2017, p. 3, [https://www.ceps.eu/system/files/HKandRG\\_EU\\_Armenia.pdf](https://www.ceps.eu/system/files/HKandRG_EU_Armenia.pdf).
  14. *Mobility partnerships, visa facilitation and readmission agreements*, [https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements\\_en](https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/mobility-partnerships-visa-facilitation-and-readmission-agreements_en)
  15. *Moldovans' Public Perceptions of Politics and Government: Results of NDI's November 2015 Public Opinion Research*, <https://www.ndi.org/moldova-november-2015-survey-results>.
  16. Poli S., *The European Neighbourhood Policy: Differentiation without Political Conditionality?*, Yearbook of Polish European Studies, 2015, Vol. 18.
  17. Regulation (EU) No 978/2012 of the European Parliament and the Council of 25 October 2012 applying a scheme of generalised tariff preferences and repealing Council Regulation (EC) No 732/2008, Official Journal of the European Union, 2012, [http://trade.ec.europa.eu/doclib/docs/2012/october/tradoc\\_150025.pdf](http://trade.ec.europa.eu/doclib/docs/2012/october/tradoc_150025.pdf).
  18. *Visa liberalisation with Moldova, Ukraine and Georgia*, [https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia\\_en](https://ec.europa.eu/home-affairs/what-we-do/policies/international-affairs/eastern-partnership/visa-liberalisation-moldova-ukraine-and-georgia_en).
  19. Wolczuk K., *Ukraine and the EU: turning the Association Agreement into a success story*, European Policy Centre policy brief, 23 April 2014, [http://www.epc.eu/documents/uploads/pub\\_4360\\_ukraine\\_and\\_the\\_eu.pdf](http://www.epc.eu/documents/uploads/pub_4360_ukraine_and_the_eu.pdf).